

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ**

27.03.2019

Նախքան օրակարգի հարցերին անցնելը ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը շնորհավորեց Ա.Սարգսյանին և Գ.Հայրապետյանին 65-ամյա հոբելյանի կապակցությամբ, 70-ամյա հոբելյանի կապակցությամբ՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Ա.Գրիգորյանին:

Նիստին հրավիրված էին հանձնաժողովների անդամները և Սպորտի մենեջմենտի աշխատակիցները:

Օրակարգ՝

1.Սպորտի մենեջմենտի և հասարակական գիտությունների ամբիոնի ուսումնադաստիարակչական և գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրության արդյունքների մասին:

(Զեկ. հանձնաժողովի նախագահ, դոցենտ Ա.Դանիելյան)

2.ՖԴՍ Ֆակուլտետի ամբիոնների « Մասնագիտություն » առարկայի դասավանդման որակի մասին:

(Զեկ. հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ն.Սելումյան)

3.ՀՖԿՍՊԻ հիմնադրամի միջազգայնացման քաղաքականության հաստատում:

(Զեկ. Միջազգային տեղեկատվական կենտրոնի ղեկավար Ա.Նուշիկյան)

4.ՀՖԿՍՊԻ հիմնադրամի գիտահետազոտական գործունեության քաղաքականության հաստատման մասին:

(Զեկ. Միջազգային տեղեկատվական կենտրոնի ղեկավար Ա.Նուշիկյան)

5.Հաստիքացուցակում փոփոխություն կատարելու մասին:

6.Հրատարակչական հանձնաժողովի առաջարկությունների մասին:

7.« Մարզաշխարհ » թերթում հայտարարված մրցույթին մասնակցելու մասին:

Դոցենտ Մ.Ռ.Ասատրյան-Ֆիզիոլոգիայի և սպորտային բժշկության ամբիոնի վարիչ

(Զեկ. ՖԴԱՏ ֆակուլտետի ղեկան, դոցենտ Է.Գալտազազյան)

Դոցենտ Խ.Թ.Հարությունյան-Ըմբշամարտի ամբիոնի վարիչ

(Զեկ. ՍՄԿ ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Գ.Սարգսյան)

մ.գ.դ. Ե.Ս.Հակոբյան-ՖՂՏ և մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր

մ.գ.թ. Ա.Վ.Պողոսյան-ՖՂՏ և մեթոդիկայի ամբիոնի դոցենտ

մ.գ.թ. Ա.Հ.Շախյան-ՖՂՏ և մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ

Ե.Ն.Նահապետյան-ՖՂՏ և մեթոդիկայի ամբիոնի դոցենտ

մ.գ.թ. Թ.Մկրտչյան- ՖՂՏ և մեթոդիկայի ամբիոնի ասիստենտ

(Զեկ. մրցույթային հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ս.Հովեյան)

1.ԼՍԵՑԻՆ՝ Հանձնաժողովի նախագահ, դոցենտ Ա.Դանիելյանին: Նա ներկայացրեց իր զեկույցը Սպորտի մենեջմենտի և հասարակական գիտությունների ամբիոնի ուսումնադաստիարակչական և գիտահետազոտական աշխատանքների ուսումնասիրությունների վերաբերյալ:

(Տեղեկանքը Կցվում է)

Ելույթ ունեցան՝ ՍՄԿ ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Գ.Սարգսյանը: Նա նշեց, որ ուսումնասիրությունների արդյունքները քննարկվել են ֆակուլտետի խորհրդում, ամբիոնը բավական բարձր ներուժ ունի, աշխատանքները կատարում է բարձր մակարդակով: Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Գրիգորյանը նշեց, որ ամբիոնը դեռ որոշ աշխատանքներ ունի կատարելու, ավելի բարձրացնելու աշխատանքի մակարդակը:

Արտահայտվեցին՝ ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը, դասախոս Է.Ղանթարյանը, պրոֆեսոր Ա.Գ.Հարությունյանը, վերջինս ներկայացրեց ամբիոնի առջև դրված հետագա աշխատանքները և հավաստեց, որ աշխատակիցները կաշխատեն ամբիոնի մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1.Սպորտի մենեջմենտի և հասարակական գիտությունների ամբիոնի կատարած աշխատանքները գնահատել բավարար:

2.Հաստատել գիտական խորհրդի որոշումը:

2.ԼՍԵՑԻՆ՝ Հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ն.Սելումյանին: Նա ներկայացրեց «Մասնագիտություն» առարկայի դասավանդման որակի ուսումնասիրությունների արդյունքները:

(Տեղեկանքը Կցվում է)

Ելույթ ունեցավ՝ ՖԴԱՏ ֆակուլտետի ղեկան, դոցենտ Է.Գալտազազյանը: Նա նշեց, որ հարցը մանրակրկիտ քննարկվել է ՖԴԱՏ ֆակուլտետի խորհրդում, անդամները ներկայացրել են իրենց առաջարկությունները, որոնք տեղ են գտել ելույթում:

Ելույթ ունեցան՝ հանձնաժողովի անդամ, դոցենտ Կ.Դանիելյանը, պրոֆեսոր Ա.Ա.Գրիգորյանը: Նրանք նշեցին դասավանդման մեջ տեղի ունեցող թերությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

3.ԼՍԵՑԻՆ՝ Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոնի ղեկավար Ա.Նուշիկյանին: Նա ներկայացրեց հիմնադրամի միջազգայնացման քաղաքականությունը:

(Քաղաքականությունը կցվում է)

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել ՀՖԿՍՊԻ հիմնադրամի միջազգայնացման քաղաքականությունը:

4.ԼՍԵՑԻՆ՝ Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոնի ղեկավար Ա.Նուշիկյանին: Նա ներկայացրեց ՀՖԿՍՊԻ հիմնադրամի գիտահետազոտական գործունեության քաղաքականությունը:

(Քաղաքականությունը կցվում է)

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել ՀՖԿՍՊԻ հիմնադրամի գիտահետազոտական գործունեության քաղաքականությունը:

5.ԼՍԵՑԻՆ՝ Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետ Է.Հակոբյանին: Նա ներկայացրեց ամբուլատորիայի ղեկավար Ն.Ասատրյանի զեկուցագիրը բաժնում բուժքրոջ հաստիք ավելացնելու խնդրանքով:

(Ձեկուցագիրը կցվում է)

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1.ՀՖԿՍՊԻ հիմնադրամի հաստիքացուցակում կատարել փոփոխություն:

2.Ամբուլատորիային հատկացնել մեկ բուժքույրի հաստիք:

6.ԼՍԵՑԻՆ՝ Հրատարակչական հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ա.Ա.Գրիգորյանին: Նա ներկայացրեց հանձնաժողովի առաջարկությունները աշխատակիցների ուսումնական ձեռնարկները տպագրելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. Համաձայնվել հրատարակչական հանձնաժողովի առաջարկությունների հետ:

2. Երաշխավորել տպագրության համար Ա.Ղարիբյանի «Մկանների մանուալ թերապիան կինեզիոլոգների համար» ուսումնական ձեռնարկը:

7. **ԼՍԵՑԻՆ՝** ՖԴԱՏ ֆակուլտետի դեկան, դոցենտ Է.Գալտազազյանին: Նա ներկայացրեց դոցենտ Մ.Ռ.Ասատրյանի ուսումնագիտական աշխատանքները: Դոցենտ Մ.Ռ.Ասատրյանը ներկայացրեց իր աշխատանքային ծրագիրը:

Ելույթ ունեցան՝ պրոֆեսոր Ա.Մարտիրոսյանը, ՍՄԿ ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ.Սարգսյանը, ռեկտոր, պրոֆեսոր Վ.Բ.Առաքելյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Թողնել դոցենտ Մ.Ռ.Ասատրյանի թեկնածությունը փակ գաղտնի քվեարկության ցուցակներում:

ԼՍԵՑԻՆ՝ ՍՄԿ ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գ.Սարգսյանին: Նա ներկայացրեց դոցենտ Խ.Հարությունյանի կատարած աշխատանքները:

Դոցենտ Խ.Հարությունյանը ներկայացրեց իր ապագա աշխատանքային ծրագիրը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Թողնել դոցենտ Խ.Հարությունյանի թեկնածությունը փակ գաղտնի քվեարկության ցուցակներում:

ԼՍԵՑԻՆ՝ Մրցույթային հանձնաժողովի նախագահ, պրոֆեսոր Ս.Հովեյանին: Նա ներկայացրեց մրցույթին մասնակցող ՖԴՏ և մեթոդիկայի ամբիոնի աշխատակիցների կատարած ուսումնագիտական աշխատանքները:

(Մրցույթային հանձնաժողովի եզրակացությունը կցվում է)

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Թողնել բոլոր թեկնածուներին փակ գաղտնի քվեարկության ցուցակներում:

Հաշվիչ հանձնաժողով՝

Հարությունյան Ա.Գ.

Մարտիրոսյան Ա.Ս.

Նուշիկյան Ա.Ս.

Քվեարկության արդյունքները՝

Գիտական խորհրդի 34 անդամներից քվեարկությանը մասնակցել է 32-ը:

	Կողմ	Դեմ	Անվավեր քվեաթերթիկ
Ասատրյան Մ.Ռ.	32	---	---
Հարությունյան Խ.Թ.	32	---	---
Հակոբյան Ե.Ս.	32	---	---
Նահապետյան Ե.Ն.	32	---	---
Պողոսյան Ա.Վ.	32	---	---
Շախյան Ա.Հ.	32	---	---
Մկրտչյան Թ.	32	---	---

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել քվեարկության արդյունքները:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԴՈՑԵՆՏ՝

Վ. Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ս. Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ